

# ՆԱՄԱԿՆԵՐ ԶԱՆԳԵԶՈՒԹԻ ԳԱԼԻԱՌԻՑ

ՆԻԿ. ԱՂԲԱԼԵՍՆԻ

## II

Նւանիձորից, ինչպէս տեսանք, ճանապարհը բարձրանում էր շարունակ. նա հասնում է մինչև Գիւմորանց սարի ուսը և ապա սկսում է գլխիվերել: Այդ սարը մի բնական սահման է Գիւնէյ-մահալի, այսինքն Մեղրու և իր շրջակայքի և Ղափանի (հին Կապանի) միջև. իմ տեսած առաջին գիւղը այդ գաւառակում կե-մանցն էր, երկրորդը Շիկահողը:

Շիկահող (ՄխացՅ). գիւղը գտնւում է մի անբառապար-դաշտակի նեղ գոգաւորութեան մէջ. արևմտեան կողմից հոսում է «կրաթաղայ» գետակը, իսկ միջից արևելքից Դէպի արևմուռք այդ գետակին խառնւող Շիկահողի ջուրը: Կլիման բարեխառն է. բնա-կիչների ասելով ոչ այնշան շոգ է ամառը, ոչ էլ ցուրտ ձմեռը Գիւղը հին է և բնակիչները բնիկ են համարում իրանց. չն յի-շում թէ գաղթած լինեն ուրիշ տեղից: 79 դուն են ներկայում, դասն ու վեց տարի առաջ 11—14 դուն գաղթել են այսպեղիդ Մազրա գիւղը հողի քչութեան պատճառով:

Գլխաւոր պարապմունքը երկրագործութիւնն է. ցանում են ցորեն, գարի, հաճար, «կըոնանէ»՝ որ մի տեսակ հացաբոյս է: Մշակութիւնը հին գործիքներով է. երեք լուծ արօր են բանեցնում: Քերքը սպառում են Մեղրում ու Նւանիձորում: Հողը ուժից ընկած է և քիչ: արդիւնք սրանալու համար անհրաժեշտ է հանգստացնելը,

որ և երկու կերպ է լինում. կամ անշակ ձգում են 1—2 տարի կամ թէ սերմը փոփոխելով են հանգստացնում. օրինակ՝ ցորենի տեղ ցանում են կրաւարք: Եիկահողին երկու ցանք ունի. աշնան ցանք և զարնան ցանք. աշնանը վարում է ու ցանում; իսկ գարնանը ցելում է: Երկրագործութիւնը սակայն չի ապահովում գիւղացոց ապրուստը, որովհետեւ հողն ուժապառ է, անպառուղ և քիչ:

Գիւղի հողը պետական է. մի կոր հող վիճելի է և, գիւղացոց ասելով, շուպով համայնքի սեփհականութիւնը կը դառնայ: Որովհետեւ բարեցրարի քչանում է վարելահողը, ուստի սկսել են անպառը կրտել և վարելահող դարձնել: Անպառը վարելահող դարձնելուն նպաստում է նաև այն հանգամանքը, որ գիւղացոց թէ սարի և թէ ցածի հողերը վար հողեր են, իսկ նոր բացած հողը ինչ կնեղի լինի լաւ է եղածից: Հողերը բաժանւած է ընդանիք-ների վրայ «համփայի» սկզբունքով. մի օրավարը 2 փութ սերմի տեղ է. իսկ մի համփան<sup>1</sup> ունի 20 օրավար հող: Սովորութիւն չունին հողը ծախելու իրար վրա, ինչպէս և ջրել չդիրեն. բոլոր հողերը անջրդի՛ «Դամփա» կամ «Դէմի» են, թէև ջուր շաբ ունին, բայց հոսանքը խորընկած է. ունին և բազմաթիւ աղբիւրներ, բայց զլուի չեն դնում, որ ջրելու համար գործադրեն: Վարելահողերը պարարտացնել չդիրեն. պարարտացնում են միայն բանջարանոցները, որ ամեն դուն ունի և որոնք ջրում են, որովհետեւ ընկած են ջրի հոսանքով. բանջարանոցները հերթով են ջրում: Հերթի վրայ հըսկում է մի առանձին մարդ, որին ընդրում են գիւղացիք, ինչպէս շամի ձորում: Կարգովիլ ցանելու տեղերը սիէյնում են:

Գլխաւոր պարապմունքներից երկրորդը անասնապահութիւնն է. 79 տանից 59-ը կով ունին 1—6 հար. այծ 1—10 հար և անպայման մի չորի կամ մի ձի. երկու դուն ոչխար են պահում՝ մինը 30, միւսը 40 հարք: Կայ նաև, քիչ դներում, կթի գոմեց: «Տաւարն» ամառը պահում են պետական արօտադեղերում, որի համար վճարում են 20 ռ., որովհետեւ իրանց հողաբաժնի մէջ չեն ընկնում. անպառին էլ, որից վայր են կորում, վճարում են 20 ռ.:

<sup>1</sup> «Համփան» կազմված է մի կամ մի քանի ընդանիքներից. կան յներ որոնք ակէս համփի հող ունեն, կան որ «Հարէք» են և ալն.

Եզները քիչ են և չեն էլ պահում, վախենալով շրջակայ գիւղերի թռւքերից, որոնք շարունակ դողանում են:

Մնում են կողմանկի երկրորդական պարապմունքները, որոնք մասնաւոր մարդկանց ձեռքն են: Գիւղը երեք ջալաց ունի, որոնք բաւական արդիւնք են տալիս, որովհետեւ աղում են թէ՝ զիւղի և թէ շրջակայքից ցորենը: Գիւղում կայ մի դարբին և մի որմանդիր. իսկ հիւսնը թափառող արհեստաւոր է, գնում գալիս է: Գիւղցիներից երկուսն էլ մանրավաճառ են: Սակայն անհնարին է տանելի ապրուսոր հանելը այս պայմաններում, ուսպի գիւղացիք երեք տարի է ինչ պանդխորում են: Ներկայում դուրսը՝ հագւում, Բաթումում, 10—15 մարդ կայ. Դրանք ծառաներ են, խոհարար կամ հասարակ մշակ: Գնում են նաև մօտակալ հանքերը, ուր կամ հանքի բանեւոր են դառնում կամ բեռն են կրում գրասորով: Ցիշելու է նաև շերամապահութիւնը, որով մի քանի դներ են պարապած և որի սակաւ արդիւնքը ծախտում է թէ դուրսը և թէ գիւղում:

Նիկահողի կինը ուրիշ տեղերի կանանց պէս աշխարհասէր է. բոլորն էլ ճախարակ են մանում և բամբակից ու բրդից թել են պարապում կիաւ ու շալ գործելու համար: Բամբակ գնում են Մելրուց, իսկ բուրդը թուրքերից են գնում փոխելով ցորենի հետ: Ինչ խօսք որ տան բոլոր գործերը կով կթելուց մինչև կարկապանը կանանց վրայ է. մասնակցում են և երկրագործական աշխարհին՝ բացի վարն ու հունձը: Այսպեղի կինը լաւ դնդես է համարւում. կարող-ձեռող, ընդհանրապէս առած գեղցիկ են: Սակայն վար վարքի տէր, ևննը տըրածած կանայք շատ կան: Պապահում են բաւականին պսակից առաջ յշացած աղջիկներ. երբեմն փեսացուն թողնում է աղջկան այդ վիճակում և ուրիշը առնում. բայց սովորաբար փեսացուներն առնում են վերջը: Զհաս պսակներ պափահում են: Աղջիկը ամուսնանում է 14—18 տարեկան, դղաները 20—25:: Կան տանը մնացող աղջիկներ, որ մի թշւառութիւն է գիւղացու համար. պարմառը երբեմն գոգութիւնն է, բայց ընդհանրապէս՝ աղքափութիւնը: Այս վերջին հանդամանքը շար անդամ ստիպում է տղին, որ ևուզած — (սիրած) աղջկան փախցնի, եթէ աղջկայ հօրանք տղի աղքափ լինելու համար չեն ուզում:

իրանց աղջիկը բալ նրան։ Պատկելիս ձեի համար հարցնում են նաև աղջկայ կամքը։ Հաղիւ է պատահում, որ աղջիկը հօր վախթ-րից դուրս գայ, որ նշանակում է թէ ամուսնութեան խնդրում հօր կամքն առաջնակարգ նշանակութիւն ունի։ Հարսը ամուսնու դանը մինելուն պէս ամենքի հետ խօսում է։ չխօսութիւն կայ, բայց հին հարսների մէջ՝ այսպեղի հարսներն ընդհանրապէս քաշող չեն և կարծ քթկալ» են պահում։

Գիւղում ուսումնարան չկայ, թէև ուղեցել են ունենալ. և իսկապէս շաբ էլ յարմար գոել է կենքրոնական ուսումնարանի համար. շուրջն են Հանդ, Սարաշէն և Շեշկերոս գիւղերը։ Ունին մի եկեղեցի, որի փոքրիկ գումարը երեցփոխը բալիս է գիւղացիներին 120<sup>0</sup>/օ-ով։ Գիւղացիք պարզք են անում երեք դէպքում՝ եզն առնելիս, յորեն առնելիս, որ միշտ պակասում է ձմրան ամիսներից ակսած, և հարկը բալու ժամանակ. և քանի որ եկեղեցու փողերը բաւական չեն գիւղի կարիքների համար, ուստի գիւղում չորս ուրիշ մարդ կան, որոնք շահով փող են բալիս 200<sup>0</sup>/օ-ով, թէ համագիւղացիներին և թէ շրջակացքին։ Գիւղից չորս երեխայ կարդում են Մելլու ուսումնարանում. գրադիպութեան հետ նրանք բերել էին և հայերէն երգեր, որ նորութիւն էր գիւղի համար։

Գիւղը երեք քահանայ ունի, մէկը, ինչպէս վերն էլ ասի, հովհում է Շւանի-ձորը. մի դգէտ։ Միւսը 100 դարեկան ծերունի է, որ սովորել է Տաթեկի վանքում. իսկ երրորդը դպրոցի երես չի դեսել. սովորել է իրանց գիւղի քահանացից։

4. Ծըկէտէն. (Чакадинъ). գիւղն ընկնում է Շիկահողից դէպի արեւելահարաւ. ձմեռը շաբ ձիւն է գալիս և ցրտեր է անում. սակայն երթևեկութիւնը չի խափանում. ամառը հով է, որովհետեւ Շիկահողի նման գիւղի փեղը բարձր է, յորենը հասնում է յուլիսի վերջերին։ Գիւղը 38 դուն է. բնակիչները 351 հոգի. 201 դպամարդ և 150 կին։ Գլխաւոր պարապմունքը երկրագործութիւնն ու անասնապահութիւնն է։ Ցանում են յորեն, գարի, հաճար և կորեկ. յորենը ծալխում են Մելլում կամ հանքերում, որ շաբ մօտ է։ Գործիքները հին են. բանեցնում են վիչսկից (արօր) և լծում են 3 զոյտ եզ։ Չողը, իրանց ասելով, այնքան էլ գրեմունք» չունի.

թէւ շապ էլ ուժասպառ չէ։ Վարելահողերը երկու փարին մէկ հանգստացնում են. երբեմն հանգստացնելը սերմը փոխելով է լինում. երկու փարի ցորեն են ցանում, մի փարի գարի կամ ուրիշ բան։ Տաւականին հող ունին, ուստի հինգ փարի է դադարել են անդառը կորել և վարելահող դարձնելուց։ Հողը համփայի վրայ է բաժանած. օրավարը հաշում են  $1\frac{1}{2}$  փթի տեղ. շափում են հողը նաև «բեռով»։ ասում են, օրինակ, «մի բեռան հող ունեմ»։ բեռը ութ փութ է. ամեն փուն ունի 1—15 բեռան տեղ հող, որ նշանակում 10—80 օրավար. հողը գիւղի սեպհականութիւնն է. սեփական է նաև անդառը, որից ով որքան փայտ ուզենայ կարող է կորել փան համար։

«Տաւարի» կողմից էլ գիւղացիք նեղութիւն չեն քաշում. ամեն փուն ունի 1—6 կով. նոյնքան էլ եզ. 2—15 այծ. համարեա գիւղի կէսը կթան գոմէշ ունի 1—2 հափ։ Տաւարն ամառը սարն են դանում. սարը պետական է և ամբողջ ամառւայ համար փալիս են 29 ս. այս հարկը դաւարագերերն են վճարում։ Սարի արդիւկը-ներից շապ քիչ է ծախս գնում. աւելի դանն է սպառում. Դրա համար էլ գիւղացոց ապրումը բանի նման է. գործ են ածում կամ, մածուն, պանիր, իւղ ու թան։

Միւս պարապմունքը հանքերին փայտ ծախելն է, որով շափերը չեն պարապած, որովհետև ձեռնորու չէ։ Փայտ ծախողները իրաւունք են առնում գիւղի ընդրած մի մարդուց, որ հակում է գիւղապատկան անդառի վրայ, և փայտ են կորում իրանց գրասպով դանում հանքերը և ծախում փութը 5 կոպէկ։ Մի երկու դրուն էլ մի քիչ շերամ՝ են պահում, որ այնքան էլ շապ բերք չի դալիս և զլիաւրապէս դան գործածութեան համար է։ Գիւղում կայ մի դարբին, մի որմնադիր, մի հիւսն և մի սափրիչ։

Միւս գիւղերի հետ համեմարած ձըկըդէնը քիչ պանդուխս է դալիս. թէւ 15 դարի է ինչ առաջին մարդը դուրս է եկել գիւղից։ Այժմ դուրս՝ նագում ու նուշում 6 հոգի կան, որոնք մշակութիւն են անում։ Պանդիստութիւնից եկածները անընդունակ են դառել երկրագործական աշխատանքին. գափանան այն է որ վար են դուրս եկել գիւղից և գիւղում եղած ժամանակ էլ, աւելորդ ուժեր լինելով՝ երկլ ագործութեամբ չեն եղել պարապելիս։

Կանագք շնորքով են և աշխատական առորնին գործերից դուրս՝ նրանք գործում են գործ, շալ, կարպելու, կրաւ և խուռջին. խելացի են և մաքրասէր: Աղջիկ առնելիս աչքի առաջ ունին նրա աշխատասիրութիւնն ու բան անելու շնորքը: Սիրահարութիւններ չկան. աղջկան ցոյց են բալիս փեսային ու հարցնում թէ հաւասնում է. իսկ աղջկան հարցնել չկայ. նա կադարում է ծնողների կամքը: Աղջիկները մարդու են զնում 13—17 տարեկան, տղաները պասկում են 20—30; նորահարսը ինչպէս և բան աղջիկը օրաբների հետ չեն խօսում. հարսը սկիսուրի հետ 3—4 տարի անխօս է մնում: Տան մէջ կնոջ դիրքը երկրորդական է. մարդն իր անելուն անում է, առանց կնոջը հարցնելու կամ նրա խորհուրդին կարեռութիւն բալու: Զհաս պսակներ քիչ են պարահում. անհաւագարիմ կանագք կան:

Դպրոց չունին. մօրակայ կիւտկիւմ գիւղի ուսումնարանում ունեցել են 8 աշակերդ, որնք ապրելիս են եղել բարեկամների մօք և կիրակնամուտին գալիս են եղել գուն, որ երկուշաբթի վաղ նորից գնան ուսումնարան: Գիւղում, բացի աշակերդները, 2—3 կարդացող կան. սրացում է նոր-Դար, որ միայն դրանք են կարդում. միւսները ոչ մի հետաքրքրութիւն չունին դէպի թերթասած բանը. նոյն իսկ լսել չեն ուզում:

Ճըկըգէնը մի եկեղեցի ունի, որ հինգ տարի առաջ է շինած. եկեղեցին գումար չունի, անպէս որ գիւղացիք թուրքերից ու կիւտկիւմցիներից են միայն պարզք առնում՝ սովորական 20<sup>0</sup>/0 ով, թէև գիւղի մէջ 7—8 հոգի շահով փող փող կայ. սրանք գլխաւորապէս օրար գիւղացիների են բալիս: Պարագը վճարել չկարողանալու դէպքում կոֆլ ու եզը կամ ունեցածը ծախելը սովորական բան բան է: Պարբքն առնուում է «վէսկու» (այսինքն վարուցանքի), եզան, ցորնի, հարսանիքի և թաղման համար: Վաշխառուները մեծ վնաս են հասցնում գիւղացու բնդիսականին:

Գիւղը մի քահանայ ունի, որ թէև այս գիւղի վրայ է ձեռնադրւած՝ բայց կիւտկիւմցի լինելով այնքել էլ ապրում է. միայն կարիք եղած դէպքում այցելում է գիւղ, այն է կնունքին, թաղման, հարսանիքին և մի երկու գլխաւոր բօներին:

5. Կիւտկիւմը (Գյուճկյոմ) Ճըկըգէնից դէպի հանգերը տա-

նող ճանապարհին է, մի բլրագագի վրայ, որ իջնում է զառիվաց-  
րով դէպի Ուշուրչայի կամ Ղափան-գետի նել հովիտը. այդ հով-  
գումն են Զանգեզուրի պղնձահանքերը. գիւղից մինչև այնպես  
1 ժաման ճանապարհ է ուսով: Գիւղը 48 տուն ունի և 507 բնա-  
կիչ. 281 տղամարդ և 226 կին: Եղանակները, գիւղացոց ասելով,  
միջակ է. ամառը հով է, ձմեռն այնքան էլ ցուրպ չէ. անձրեներն  
էլ առար են լինում: Նուրջն են Ճըկըտէն, Բղաւէրծ (ջ) չորս վերարի  
վրայ և Վաղաքան (7 վերարի վրայ) գիւղերը, այնպէս որ կարող է  
քահանայական կենդրոն լինել:

Յանքերը բռնում են ցորենը, դարին, աճարը, կորեկը և կըռ-  
նանէն՝ որից շատր համով հաց են թխում: Փոքրիկ բանջարանոց-  
ներում ցանում են լոբի, կարգովիկ և բանջարեղին: Հողի արդիւնքը  
շատր քիչ է, ուստի և ոչինչ չի արգահանւում: Ընդհակառակը  
հացը միշտ պակասում է, որ և գնում բերում են Կեպերից (գե-  
տիքերից), որ պարզաբու հողերով շրջապատած թուրք գիւղերի մի  
խումբ է դէպի հարաւ՝ Արաքսի ափերին ընկնող: Վարուցանքը հին  
ձեռվ է. նոյն վիշտինս երեք լուծով: Ընդհանրապէս հողը յոգնած  
է և անպատշ, սովորաբար միջակ բերք են սրանում, մէկին երեք:  
Օգուելու համար անհրաժեշտ է հանգուբացնելն ու պարարպացնելլ.  
Երկուսն էլ անում են. մի տարի վարում են և ապա երկու տարի  
հողի մնում է ընկած. իսկ պարարտացնելու միջոցներից մէկը հուն-  
ձի մնացորդի՝ խոզանի այբելն է, մի օր՝ աշբելլ, որին միայն գիւ-  
ղին մօգիկ հողերն են ենթարկում: Հեռուները չեն տանում, որով-  
հետեւ մեծ աշխարհանք է: Հողերի մեծագոյն մասը, ինչպէս ամբողջ  
գաւառում այնպէս էլ այսպեղ բլուրների ու սարերի թեք լանջերի  
վրայ է ընկած. ճանապարհներ ինչ խօսք որ չկան, գաւառում ոչ  
մի անիւառոր կառք չի բանում, իսկ ձիով այդ գիւղերն աշբ տանելը  
«փէնսելու» համար գլխացաւանք է միայն: Պարարտացնելու միւս  
միջոցն էլ սերմափոխութիւնն է: Բոլոր հողերը դէմի են, անջրդի:  
Վարելահողը, անդառի մի մասն ու արօգները գիւղի սեփա-  
կանութիւնն է և բաժանւած է «համփայի» վրայ: Մի օրավարը  
-1½ փթի փեղ է (այսինքն կարող է 1½ փութ սերմ աճեցնել), բեռը  
9 փութ է. ամեն տուն 4—10 բեռան փեղ հող ունի, այսինքն  
24—60 օրավար: Պէտք է այսպեղ նկարեմ, որ օրավարին ամեն-

գիւղում միենոյն չափով հող չէ համապատասխանում. օրավարները բարբեր են նայած հողին. ինձ յայտնի չէ օրավարի իսկական, թւական չափսը. կարող եմ ասել սակայն, որ յամենայն դէպս ընդունւած կէս դեսեադինից փոքր են այսպեղի օրավարները:

Գիւղը բաւականաշափ բաւար ունի. ամեն փուն կով ունի 1—8 հար, վերցրած ամենաշապ ու ամենաքիչ թւերը, 1—6 եզ, 1—15 այծ (մեծամասնութիւնը 1—2 այծ). մի չորս-հինգ փուն մի-մի կթան դոմէշ ունին, մի փուն էլ 30 ոչխար: Տաւարն ամառը սար է գնում արքունական հողերի վրայ, որի համար բաւարարէրերը վճարում են 40 ռ. բարեկան:

Եթէ կողմնակի գործեր չունենային գիւղացիք, հազիւ կարող էին ծայրը ծայրին հասցնել. հանքերի մօրիկութիւնը մի բաշտ է դիւրկիւմցոց համար: Գիւղացիների մի խոշոր մասը, գլխաւորապէս աղքարները՝ այնորեղ փայտ ու ածուխ են ծախս բանում: Անգառի մի մասը, որ դիւղի համայնքին չի սպագիանում, այլ 8 հոգու միայն, գիւղացիները կտրում են թէ ածուխ շինելու և թէ փայտի համար. փայտի փթին վճարում են մի կոտէկ և յետոյ հանքերում փութը ծախում 5—7 կոպ.: Իսկ ածուխի բեռը գնում է 90 կ.—1 ռ. 30 կ. բեռը երկու հար երկու արշին երկարութիւն ունեցող բուլրակ է: Գիւղացիների մի մասն էլ բեռնակիր է հանքերում: Սրհեարաւորներից կան դարբին 2 հար, սափրիչ 1 հար. ապար դնող 3 հար, հիւսն 2 հար և մի «դաստա» (խումբ) զուռնաչի, որոնք ուրիշ գիւղեր էլ են կանչում: Մէկ երկու հարուստ փուն կապալներ ունին վերցրած հանքերում, մի քանի հոգի էլ շերամի բոժոն (քարամա) վաճառելով են զբացւած: Բոժոնն առնում են ցածի թռւրքերից և ծախս բանում նուշի կամ 0րդուբաթ՝ մեռաքսաթելի գործարանները: Գիւղի մէջ էլ մի 20 փուն շերամէ պահում, բայց քիչ քանակութեամբ. գլխաւորապէս բան համար. բունը 1—4 փութ արդիւնք է սպանում:

Տաս-բասերիկու բարի է սկսել են պանդխրել. Կիւրկիւմցիներ կան այժմ նազւում, Մերւում (անդրկասպեան երկիր), Պարսկասրանում. մշակներ, ծառաներ, խանութպան, վաճառական և նոյն իսկ գործարանարէր (բագւում): Ամենքը գնում են փող աշխարելու, զլուստ պահելու. գիւղում ապրելն անհնարին է դարձել: Ներկայումս

Դուրսը 15 մարդ կայ, յետ են եկել չորս մարդ, որոնք անընդունակ են դառել երկրագործական աշխատանքին. այժմ բանւոր են հանքում կամ բեռնակիր՝ գրասրով: — «Մի բանն որ մշակութիւն ա, ասում էին, հազիր մեր գիւղի մօտ ըլինքն: Չորս գոռն էլ զաղթել են բոլորովին—Արդարիլ (Պարսկաստան), Մերվ, Եռշի և Բագու:

Մի եկեղեցի ունին, որի փողը գալիս են գիւղացիներին փոկուով. շահով փող բարով ուրիշ 4 մարդ կայ գիւղում. քիչ ժամանակով փող են փոխ առնում, իսկ եզր սարկած կամ հացը պակսած ժամանակ արդէն պարզք են առնում: Ացցելածս գարին ունէին և մի հայոց ուսումնարան, որ բացել էին 95 թ. Սեպտ. Ուսումնարանն ունէր 60 աշակերդ և 7 աշակերպուհի. աշակերպներից 8-ը ձըկը-դէնից, մէկ-մէկ Վաչաքանից, Բղաւէրճից և Խլաթաղից և 3-ը Բէ-խից: Ունէին մի ուսուցիչ 460 և. գարեկան ոռնիկով. գալիս էին նաև սենեակ, վառելիք և ծառայ:

Եեպաքքրական եմ համարում մէջ բերել յիշարակարանիցս մի մի Կիւտկիւմցի զրուցակցի կարծիքները ուսումնարանի մասին. պէսք է ասեմ, որ Մելլուց մինչև Տիւղ բոլոր գիւղերում և ամենքի բերանից նոյնն եմ լսել, այնպէս որ մէջ բերածս եթէ ոչ ժողովրդի, գոնէ զանգեզու ցցի հայի կարծիքը պիտի համարել: Նրա ասելով ուսումնարանը իրանց ցողար կամքովս են բաց արել, նկատելով որ անուսում ռանգիր մարդը մի բանի պէտք չէ: Ուսումնարանի վրայ նայում են, ինչպէս մի հիմնարկութեան վրայ, որ օգնում է ապրուսիք ձեռք բերելուն, գլուխ պահելուն, այսինքն ունեւոր դառնալուն. մի հիմնարկութիւն, որից դուրս եկողը գրի սեւ սիպրակն ճանաչում է, կարող է մի շղուլուղի (Ժաւայութեան) մքնել, միտքը բաց է: Ուսուցչից ամենից առաջ իմ զրուցակիցը պահանջում էր, որ լաւ բնաւորութիւն ունենայ. Ուսումնական ըլի վարժապետը, որ անգին մարդարիս ըլի՝ բնաւորութիւնը վար էլ ընչի ա պէտքը, էրեխայ թակող չըլի, դինջ ըլի, հարբեցող չըլի: Իմ հարցին ուսուցչի գիւղական խնդիրներին մասնակցելու մասին՝ ասաց. «Ի՞նչ հարկաւոր ա. Շթաւծիր (հարկ) չի գալու. թող գլուխը կախ իր գործին մնայ: Որ ըփէնց անի (այսինքն գիւղի գործերով կենայ) էնա խառնակիչ ա էլի: ես նրան կանչում եմ իմ դուն. թող ուտիի, խմի, գնա իրա դուն՝ հանգստանայ:

Գիւղում սրանում էին Մշակ, Նոր-Դար, Արձագանք, եօթ հոգի գրագիր հասկանալու չափ կարդալ զիտեն. մնացած գիւղացիներից բանիմացները սիրով են լսում: Նկատեմ այսորեղ, որ ընդհանրապէս այս կողմի գիւղերում կարդալ իմացող աւելի շաբ կայ քան գրող. շաբերն էլ ոգրել գիտեն առանց կարդալ իմանալու, այն էլ միայն իրանց ազգանունները. բայց դրանք ոչ թէ գրում են, այլ իսկապէս նկարում, գծում են. գիտեն որ յայրնի ձեռվ քաշած գծերը իրանց ազգանունն է կազմում. այսպէս են և կարդալ իմացողներից շաբերը: Ընդհանրապէս այս գիւղի բնակիչների գիտակցութիւնը բարձր է միւսների հետ համեմափած: Թուրքերն ակնածում են սրանցից, գլխաւորապէս՝ որովհետեւ վախենում են. 30—40 որսկան կան գիւղում, որոնք կորիճ ողամարդիկ են և իրար պահող: Այս գիւղի ապրուստն էլ բարբերում է միւս գիւղերի ապրուստից. միսը անսովոր բան չէ. գործ են ածում իւղ, պանիր, մածուն, թան, ձու, կաթ. ապրում են մինչև 70—80 տարի. 60 տարեկանները շաբ-շաբ են: Գիւղացոց ապրուստն ու ապահովողն ու բանի նման դարձնողը կողմակի պարապմունքներն են:

Կանաչք աշխատասէր են և գնորես, գործում են կարպետ, գորդ, խալի, կտաւ, քեարգեաւ (ասեղնագործ), սեղանի ծածկոց Մարդու են գնում 13—18 տարեկան. ողամարդիկ կին են առնում 18, բայց մանաւանդ մինչև 20—30 տարին: Սիրահարութիւններ կան, ինչպէս նաև աղջիկ փախցնելը, որ արդիւնք է ողաջի աղջապութեան կամ չհասութեան. վերջինը անսովոր բան չէ: Ամուսնութեան գործում աղջկայ ձայնը նշանակութիւն ունի: Հարսները օգարիների և սկեսուր-սկեսրայրի հետ չեն խօսում: Նրանց խորհուրդները մարդը լսում է, որքան դան ներքին գործերին է վերաբերում: Հակառակելու ամեն դէպքում կնոջ ծեծել գիտեն: Վար վարքի ուր կանաչք քիչ կան.—կը սպանեն երկուսին էլ, ասում էր մէկը: Կանանց մի մասը երեսը բաց ունի, միւսը ծածկած կարճ քթկալով:

Գիւղում երիտ քահանայ կայ. մէկը ձըկլուկն է հովում, միւսը կիւֆկիւմը. վերջինը ուսել է նուշի մի քահանայի մօտ. ուսումնարանում կրօնի դասեր ունէր. ինքը ուելացի է. գիւղի ուածարդիւնքը բաւարար էր համարում: